



Գերմանիայի
Դաշնային Հանրապետության
դեսպանություն
Երևան

AU-PAIR

(միայն Գերմանիայի համար)

Վիզայի համար դիմում ներկայացնելը

Դիմում ներկայացնելու համար անհրաժեշտ է նախապես պայմանավորվածություն ձեռք բերել: Պայմանավորվածություն կարող էք ձեռք բերել միայն առցանց (օնլայն):

Օնլայն-հերթագրման համակարգ կարող էք մուտք գործել դեսպանության կայքէջի միջոցով.
www.eriwan.diplo.de

Փաստաթղթերն ընդունելուց հետո գործերի քննության և մշակման համար պահանջվում է առնվազն **2-4 շաբաթ**: Առանձին դեպքերում կարող է սուել ավելի երկար:

Հայաստանի քաղաքացիների համար այցագրի վճարը կազմում է 75 եվրո: **Այն պետք է մուծել փաստաթղթերը հանձնելիս՝ համարժեք ՀՀ դրամով:**

Գործերը հանձնելիս դիմողը պետք է լինի **27 տարեկանից փոքր**, աշխատանքային գործունեություն սկսելու նվազագույն տարիքը 18-ն է:

Au-Pair ծրագրերի և գործակալությունների վերաբերյալ տարբեր լեզուներով տեղեկություններ կարող էք ստանալ լիցենզավորված «Արտոնագրված հասարակական Au-Pair գրանցված կազմակերպություն» www.guetegemeinschaft-aupair.de ինտերնետային էջում:

Դիմումի փաստաթղթերը

Դիմում հանձնելիս անհրաժեշտ է **անձամբ** ներկայացնել ստորև նշված փաստաթղթերը:

Սկզբունքորեն բոլոր փաստաթղթերը պետք է ներկայացնել **բնօրինակով**, յուրաքանչյուրից նաև՝ **երկուական պատճեն**: Խնդրում ենք ուշադրություն դարձնել, որ փաստաթղթերը պատուհանի մոտ պետք է հանձնել **երկու նույնական փաթեթով** (յուրաքանչյուր փաթեթը սկսվում է դիմում-հարցաթերթիկով և պարունակում ստորև թվարկված փաստաթղթերի պատճենները)՝ դասավորելով նշված հերթականությամբ: Բոլոր փաստաթղթերը (հատկապես անձնագրի պատճենները) անհրաժեշտ է ներկայացնել **A4 ֆորմատի** թղթի վրա: Խնդրում ենք թղթերը **չկարել, չամրացնել**:

Դեսպանությանը հասցեագրված ֆաքսերը կամ գրությունները չեն տեսակավորվում և չեն կցվում գործերին: Ոչ լիարժեք դիմումներ չեն ընդունվում:

Դեսպանությունն իրեն իրավունք է վերապահում պահանջել լրացուցիչ փաստաթղթեր: Լիարժեք դիմում ներկայացնելը դեռևս բավարար հիմք չէ այցագիր ստանալու համար:

Դեսպանությունը նշում է, որ համաձայն Կացության մասին օրենքի §82-ի յուրաքանչյուր դիմող պարտավոր է ապահովել դիմումի լիարժեքությունը, որն է փաստաթղթի բացակայության դեպքում դեսպանությունը համարում է, որ այն չի կարող ներկայացվել:

Անհրաժեշտ փաստաթղթեր

- գերմաներենով կամ անգլերենով, **լիարժեք լրացրած 2** դիմում-հարցաթերթիկ: Այն կարող էք գտնել մեր ինտերնետային էջում՝ <https://videx-national.diplo.de>
- 3 նոր, բիոմետրիկ լուսանկար, երկուսը խնդրում ենք ստանձել դիմում-հարցաթերթիկին

- գործող ճամփորդական անձնագիր՝ ելքի կնիքով, վավերական ամենաքիչը 6 ամիս ամիս:
(Անձնագրում պետք է լինի առնվազն երկու դատարկ էջ, իսկ վավերականության ժամկետը չպետք է գերազանցի 10 տարին)
- անձնագրի այն էջերի պատճենները, որտեղ առկա է կնիք, այցագիր կամ որևէ այլ նշում (2 օրինակ)
- ստորագրված հայտարարություն կեղծ տվյալների վերաբերյալ (տե՛ս դիմում- հարցաթերթիկը)
- Au-Pair-ի պայմանագրից երկու պատճեն
 - Պայմանագիրը կարող է ներկայացվել որպես pdf-փաստաթուղթ կամ հեռապատճեն (ֆաքս), եթե Au-pair հարաբերությունը ձևավորվել է RAL-ապրանքանիշը կրող որևէ գործակալության միջնորդությամբ:
 - Եթե պայմանագիրը չի կնքվել գործակալության միջնորդությամբ, ապա այն նույնպես կարող է ներկայացվել որպես pdf-փաստաթուղթ կամ հեռապատճեն, եթե միաժամանակ ներկայացվեն հյուրընկալող ծնողների անձնագրերի կամ անձը հաստատող այլ փաստաթղթերի տվյալների էջերի երկուական պատճենները: Հյուրընկալող ծնողները անձնագրի պատճենները կարող են դիմումը հանձնելուց անմիջապես հետո ուղարկել national@eriu.diplo.de հասցեին՝ նշելով դիմումատուի անուն-ազգանունը և դիմումի 6-նիշ թիվը:
- Ինքնուրույն կազմված և ստորագրված (երկու օրինակ) պատճառաբանություն (մոտիվացիա), որում մանրամասն նկարագրված են Au-pair կացության հիմքերը և հետագա մասնագիտական մտադրությունները: Եթե այն գերմաներեն չէ, ապա անհրաժեշտ է կցել թարգմանությունը:
- այցը մանրամասնորեն հիմնավորող գրություն՝ գերմաներեն լեզվով և մեկ պատճեն
- կրթության, ինչպես նաև զբաղվածության վերաբերյալ ամբողջական տվյալներով մանրամասն ինքնակենսագրություն՝ գերմաներենով, նաև մեկ պատճեն
- տեղեկանք ուսման վայրից կամ դիպլոմի պատճենը, աշխատելու դեպքում աշխատավայրից տեղեկանք՝ հայերեն տարբերակները դեպքում՝ գերմաներեն թարգմանությամբ և մեկ պատճեն
- գերմաներենի՝ եվրոպական չափանիշներին համապատասխան Ա1 մակարդակի իմացության մասին ապացույց՝ Գյոթե-ինստիտուտի „Start Deutsch 1“ սերտիֆիկատ կամ Ավստրիական լեզվական դիպլոմ կամ TestDaF –ի վկայական կամ telc Start Deutsch1-ի վկայական (երկու օրինակից): Եթե առկա է գերմաներենի իմացության զգալի բարձր մակարդակ (օր.՝ գերմանիստի դիպլոմ), ապա լեզվի իմացությունը հնարավոր է ապացուցել գործերը հանձնելիս՝ վիզաների բաժնում անցկացվելիք լեզվական փոքր թեստի միջոցով:

Կարևոր ցուցումներ

Ձեր ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ **դեսպանության շենքում վիզաների բաժնի պատուհանի մոտ** գանձվող այցագրի վճարից բացի այցագրի համար դիմելիս այլ վճար նախատեսված չէ:

Դեսպանությունը **չի համագործակցում** որևէ տուրիստական ընկերության հետ: **Դա վերաբերում է նաև դեսպանության անմիջական հարևանությամբ գտնվող ծառայություններ մատուցող գրասենյակներին: Ճամփորդական կամ այլ ծառայություններ մատուցող գրասենյակների աշխատակիցների պնդումներն այն մասին, որ իրենք համագործակցում են դեսպանության հետ, չի համապատասխանում իրականությանը:**

Ոչ ոք չի կարող ազդել Ձեր դիմումի հաջողության հեռանկարի վրա, քանի որ դիմումների վերաբերյալ որոշում է կայացնում բացառապես գերմանացիներից բաղկացած անձնակազմը: **Եթե Ձեզ այլ բան են խոստանում, ապա Ձեզ փորձում են խաբել: Ոչ մի դեպքում փող մի՛ վճարեք:**

Այցագրի հետ կապված հարցերի մասին արժանահավատ տեղեկություն կարող էք անվճար ստանալ դեսպանության վիզաների բաժնի աշխատակիցներից: Այլ անձինք տեղեկություններ տրամադրելու իրավասություն չունեն: